24.11.2022թ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հիմք ընդունելով Սահմանադրության 100-րդ հոդվածը, «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 41-43-րդ հոդվածները, որպես Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազը մեկ քառորդի նախաձեռնություն առաջարկում ենք 2022թ. դեկտեմբերի 2-ին ժամը 11:00-ին գումարել Ազգային ժողովի արտահերթ նիստ, հետևյալ օրակարգով՝

1. «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հայտարարությունը Ադրբեջանի խորհրդարանի 2022 թվականի նոյեմբերի 8-ի հայտարարության կապակցությամբ» Ազգային ժողովի հայտարարության նախագիծ (Կոդ՝ Խ-437-23.11.2022-ԱՀ-013/0):

Արտահերթ նիստը սկսելու օրը և ժամը՝ 2022թ. դեկտեմբերի 2-ին ժամը 11:00-ին -ին:

Արտահերթ նիստի համար առաջարկում ենք օրակարգային հարցի քննարկման տևողությունը սահմանել երեք ժամ:

Արտահերթ նիստը նախաձեռնողի ներկայացուցիչը, ինչպես նաև օրակարգային հարցի հիմնական զեկուցողը «Հայաստան» խմբակցության պատգամավոր Անդրանիկ Թևանյանն է:

Սույն գրությանը կից ներկայացնում ենք

1. «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի հայտարարությունը Ադրբեջանի խորհրդարանի 2022 թվականի նոյեմբերի 8-ի հայտարարության կապակցությամբ» Ազգային ժողովի հայտարարության նախագիծը և նախագծի ընդունման հիմնավորումը:

2. «2022թ. դեկտեմբերի 2-ին գումարված Ազգային ժողովի արտահերթ նիստում հարցի քննարկման տևողության սահմանման մասին» Ազգային ժողովի որոշման նախագիծը:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2-ԻՆ ԳՈՒՄԱՐՎԱԾ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏՈՒՄ ՀԱՐՑԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ազգային ժողովը ՈՐՈՇՈՒՄ Է.

Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազը մեկ քառորդի նախաձեռնությամբ 2022թ. դեկտեմբերի 2-ին ժամը 11:00-ին գումարված Ազգային ժողովի արտահերթ նիստի օրակարգային հարցի քննարկման տևողությունը սահմանել երեք ժամ:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 8-Ի ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Հիմք ընդունելով ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածը, «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 98-րդ հոդվածը՝

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը

Արձանագրում է.

1. Ադրբեջանը միտումնավոր խեղաթյուրում է Լեռնային Ղարաբաղի խնդրի էությունը, պատմական փաստերը: Հակամարտությունը ծագել է Ադրբեջանի՝ Լեռնային Ղարաբաղի բնակչության ազատ կամքի ճնշման և իրավունքների ոտնահարմանն ուղղված էթնիկ զտման քաղաքականության հետևանքով, որին հաջորդել է լայնածավալ ռազմական ագրեսիան՝ ընդդեմ իր իսկ պատմական տարածքում ինքնորոշված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության:

2. 1994թ. մայիսի 12-ին Հայաստանի և Ադրբեջանի պաշտպանության նախարարների և Լեռնային Ղարաբաղի պաշտպանության բանակի հրամանատարի կողմից ստորագրվել է հրադադարի հաստատման համաձայնություն, որով սահմանված ուժի գործադրման կամ դրա սպառնալիքի կիրառման արգելքը Ադրբեջանը պարբերաբար խախտել է:

3. Ադրբեջանը, Թուրքիայի ու վարձկան միջազգային ահաբեկիչների ներգրավվածությամբ, 2020 թվականի սեպտեմբերի 27–ին պատերազմ է սանձազերծել Արցախի Հանրապետության դեմ՝ խախտելով Ղարաբաղյան հակամարտության կարգավորման միջնորդական մանդատ ունեցող երկրների՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ Ռուսաստանի Դաշնության, Ֆրանսիայի, Ամերիկայի Միացյալ Նահանգների կողմից հիմնարար գնահատված Հելսինկյան Եզրափակիչ Ակտի (1975թ.) ԵԱՀԿ/ԵԱԽՀ մասնակից պետությունների միջև հարաբերություններն ուղղորդող սկզբունքների հռչակագիրը, մասնավորապես՝ ուժի կամ ուժի կիրառման սպառնալիքից զերծ մնալու միջազգային պարտավորությունը:

4. 44–օրյա պատերազմի ընթացքում Ադրբեջանը և այդ երկրի դաշնակիցներն իրագործել են մարդկության դեմ ուղղված պատերազմական հանցագործություններ և

բարբարոսություններ՝ կիրառելով արգելված զենքեր, թիրախավորելով խաղաղ բնակչությանը, ավիրելով քաղաքներ և գյուղեր:

5. Ադրբեջանի ռազմաքաղաքական ղեկավարությունը վարում է էթնիկ զտման և մշակութային արժեքների ոչնչացման քաղաքականություն: Ադրբեջանի կողմից օկուպացված տարածքներում են մնացել 1456 հայկական պատմամշակութային հուշարձաններ, հսկայածավալ մշակութային ժառանգություն, որոնք բացահայտորեն ոչնչացվում կամ յուրացվում են՝ կեղծելով դրանց պատկանելությունը:

6. Կոպտագույն խախտելով միջազգային մարդասիրական իրավունքը՝ Ադրբեջանն արգելափակել է իր կողմից օկուպացված Արցախի շրջաններում և 2022 թվականի սեպտեմբերի 13-ի ադրբեջանական ռազմական ագրեսիայի հետևանքով բռնազավթված Հայաստանի Հանրապետության տարածքներում անհետ կորածների որոնման աշխատաքները, ինչպես նաև խոչընդոտում է զոհված հայ զինծառայողների և քաղաքացիական անձանց մարմինների դուրս բերմանը:

7. Ադրբեջանն իր մտադրություններով և քաղաքականությամբ դառնում է նոր պատերազմի ու տարածաշրջանային անկայունության աղբյուր, որի ապացույցներից է 2021 թվականի հունիսի 15–ին Թուրքիայի ու Ադրբեջանի նախագահների ստորագրած, մեզ համար անընդունելի և դատապարտելի, այսպես կոչված, Շուշիի հռչակագիրը:

Դատապարտելով Ադրբեջանի շարունակվող ագրեսիվ ու միջազգային իրավունքին հակասող հակահայ քաղաքականությունը, որն արտահայտված է նաև Ադրբեջանի խորհրդարանի 2022թ. նոյեմբերի 8-ի ընդունած փաստաթղթով

Հայտարարում է.

1. Ադրբեջանը պարտավոր է հայ-ադրբեջանական հարաբերությունների կարգավորման շրջանակներում անվերապահորեն կատարել ստանձնած պարտավորությունները, վերջ տալ հայատյացությանը, ռազմական հռետորաբանությանը, բացառել ուժի կիրառումը, ուժի կիրառման սպառնալիքը, ինչպես նաև շանտաժի և ճնշումների միջոցով ցանկալի համաձայնագրերին հասնելու քաղաքականությունը:

2. Ադրբեջանական կողմը պարտավոր է իր զինված ուժերը անհապաղ վերադարձնել մինչև 2021թ. մայիսի 12-ը զբաղեցրած բնագծերը:

3. Անվերապահորեն կատարելով միջազգային մարդասիրական նորմերն ու պահանջները՝ Ադրբեջանը պետք է վերադարձնի հայ ռազմագերիներին ու այլ պահվող անձանց, զոհված զինծառայողների և քաղաքացիական անձանց մարմինները,

դաղարեցնի էթնիկ զտման և մշակութային արժեքների ոչնչացման, յուրացման քաղաքականությունը:

4. Մենք համոզված ենք, որ հայ–ադրբեջանական հարաբերությունների ու տարածաշրջանային գլոբալ անվտանգության ապահովման համար անհրաժեշտ է գտնել խաղաղ գոյակցության բանաձև, բայց այն չպետք է լինի ուժի կամ ուժի սպառնալիքի կիրառման պայմաններում, չպետք է ոտնահարի կողմերից որևէ մեկի իրավունքները, չպետք է սպառնա Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությանն ու տարածքային ամբողջականությանը:

5. Մենք կողմ ենք ճանապարհների ապաշրջափակմանը և տարածաշրջանի երկրների համագործակցությանը, սակայն բացառվում է դրա իրականացումը ՀՀ ինքնիշխան տարածքով միջանցքի տրամադրման միջոցով: Մեզ համար անընդունելի է շանտաժների և ուլտիմատումների լեզուն:

6. Արցախահայության իրավունքներն ու անվտանգությունն ապահովելու կարևորագույն գործոններից ենք համարում ազգերի ինքնորոշման իրավունքի իրացումն՝ առանց սահմանափակումների: Արցախի Հանրապետությունն ամրագրել է իր անկախությունը նախկին ԽՍՀՄ օրենսդրության ու միջազգային իրավունքի բոլոր նորմերին համապատասխան: Հայաստանի Հանրապետությունը, ՀՀ անկախության հռչակագրի, ՀՀ սահմանադրության և օրենքների համաձայն, սատարելու է արցախահայության ինքնորոշման իրավունքի իրացմանը, անվտանգության ապահովմանը և Արցախի միջազգային ճանաչմանը: Արցախը չպետք է լինի Ադրբեջանի կազմում:

Կոչ ենք անում միջազգային հանրությանը՝

- գնահատական տալ ադրբեջանական ագրեսիային, և դատապարտել Հայաստանի ու Արցախի տարածքների բռնազավթումը,

- պատասխանատվության ենթարկել և պատժամիջոցներ կիրառել Ադրբեջանի դեմ՝ ռազմական հանցագործությունների համար,

- նպաստել ՄԱԿ-ի կանոնադրության լիարժեք իրագործմանը՝ սատարելով Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացմանը:

Դիմում ենք միջազգային հումանիտար կազմակերպություններին՝ գործուն քայլեր իրականացնել հայ ռազմագերիների ու այլ պահվող անձանց վերադարձի հարցում:

Հիմնավորում

Ինչպես հայտնի է, Ադրբեջանի Հանրապետության խորհրդարանը 44–օրյա պատերազմի մասին օրերս հայտարարություն է ընդունել՝ տալով Ղարաբաղյան հակամարտության էությունը նենգափոխող, սեփական ռազմական հանցագործութիւններն արդարացնող, Հայաստանի ու Արցախի միջազգային վարկանիշին վնասող գնահատականներ:

Ադրբեջանը «հիմնավորել» է իր ագրեսիվ գործողությունները, հանդես եկել Հայաստանի ու Արցախի դեմ նոր սպառնալիքներով:

Հայաստանի խորհրդարանը չի կարող անպատասխան թողնել այդ հայտարարությունը և հանդես չգալ միջազգային հանրությանն ապակողմնորոշող ադրբեջանական հայտարարության դեմ:

Հայաստանի Հանրապետության խորհրդարանի հայտարարությունը ևս մեկ անգամ կարձանագրի մեր երկրի անվտանգությանը վերաբերող կարմիր գծերը, աշխարհին ուղղերձ կհղի արցախահայության իրավունքների պաշտպանությանն ու դրանց իրացմանը սատար կանգնելու իր վճռականության մասին:

Ազգային ժողովի պատգամավորներ՝

հ/հ	Անուն, ազգանուն		ստորագրություն
1.	Աշոտ Օհանյան	078	[signature]
2.	[illegible]	083	[signature]
3.	[illegible]	083	[signature]
4.	[illegible]	082	[signature]
5.	Գառնիկ Դանիելյան	087	[signature]
6.	[illegible]	081	[signature]
7.	Արմենուհի Կյուրեղյան	093	[signature]
8.	[illegible]	100	[signature]
9.	[illegible]	099	[signature]
10.	Սարգիս Խանդանյան	085	[signature]
11.	[illegible]	079	[signature]
12.	[illegible]	073	[signature]
13.	[illegible]	092	[signature]
14.	[illegible]	084	[signature]
15.	Արթուր Սարգսյան	096	[signature]
16.	Հովիկ Աղազարյան	076	[signature]
17.	[illegible]	095	[signature]
18.	[illegible]	089	[signature]

19.	[illegible]	097	[illegible]
20.	[illegible]	090	[illegible]
21.	[illegible]	096	[illegible]
22.	[illegible]	075	[illegible]
23.	[illegible]	099	[illegible]
24.	[illegible]	105	[illegible]
25.	[illegible]	106	[illegible]
26.	[illegible]	103	[illegible]
27.	[illegible]	101	[illegible]
28.	[illegible]	102	[illegible]
29.	[illegible]	107	[illegible]
30.	[illegible]	091	[illegible]
31.	[illegible]	088	[illegible]
32.	[illegible]	077	[illegible]
33.	[illegible]	094	[illegible]
34.	[illegible]	079	[illegible]
35.			